# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
## ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/23 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

**ք. Երևան** **«15» հունվարի 2020թ.**
**ժամը՝ 10:00**

**Մասնակցում էին՝**
**Հանձնաժողովի նախագահ՝**
Մելանյա Սահակյան՝ ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Օ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կլինիկական դեղագետ:
**Անդամներ՝**
***<u>Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)</u>***
Լաուրա Մուրադյան՝ ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Օ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի Լաբորատորիայի բաժնի ղեկավար,
Կարեն Մելիքսեթյան՝ ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Օ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի մեծահասակների բաժնի վարիչ,
***<u>Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)</u>***
Ալեքսան Սիմոնյան՝ ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Օ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի համակարգչային ցանցերի ադմինիստրատոր,
Շավարշ Եփիկյան՝ ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Օ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի ինժեներ:
**Հանձնաժողովի քարտուղար՝**
Անի Գալստյան՝ ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Օ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի գնումների պատասխանատու.

1. **Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

**1.1 Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա կազմակերպված ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/23 ծածկագրով** ընթացակարգի գնային առաջարկների ներկայացման մասին.
**1.2** Ընթացակարգին մասնակցելու հրավերը ուղղարկվել է էլեկտրոնային գնումների կայքում՝ www.armeps.am համակարգի միջոցով **բացվել են 15.01.2020թ-ին, ժամը 10:00-ին, ք.Երևան Ներսիսյան 7 հասցեում** և օրենքով սահմանված կարգով հրավերը հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում:
**1.3** Գնային առաջարկ պարունակող ծրարները բացվել են էլեկտրոնային եղանակով.
**1.4** Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Կազմակերպության հասցեն |
|---|---|---|
| 1 | <<Բիո Քիմ>> ՍՊԸ | Ք. Երևան, Մանանդյան 33, 1/1, biochemarmenia@gmail.com |
| 2 | <<Արիմս Թրեյդ>> ՍՊԸ | Ք. Երևան, [illegible] |
| 3 | <<Խաչպար>> ՍՊԸ | ք. Երևան, Րաֆֆի 33/7, khachpar.llc@gmail.com |
| 4 | <<Լեյկո>> ՍՊԸ | Ք. Երևան, Ֆուչիկի 27/14 leykoolex@gmail.com |
| 5 | <<Դեզսերվիս>> ՍՊԸ | Ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Ներսիսյան 7, [illegible] |

***Կողմ՝ 5, Դեմ՝ 0***

2. **Տվյալներ՝ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանության բացահայտմամբ՝

2.1 <<Լեյկո>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած չափաբաժին 4-ում կան անհամապատասխանություններ:
**Հրավերում հստակ նշված է, որ** առաջարկվող ախտահանիչ նյութը իր բաղադրությունում չպետք է պարունակի որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ:
**<<Լեյկո>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրում նշված է-** Որպես ազդող նյութ իր բաղադրության մեջ պարունակում է չորրորդային ամոնիումի միացությունների խառնուրդ ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդի և ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդի խառնուրդ, 1% պոլիհեքսամեթիլենգուանիդին և Ն,Նբիս (N,N-բիս) (3-ամինապրոպի) 9.75% դիդեցիլդի-մեթիլամոնիումի քլորիդ հետ (գումարային 99 %):

2.2 <<Բիո-Քիմ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած չափաբաժին 2-ում կան անհամապատասխանություններ:
**Հրավերում հստակ նշված է, որ** միջոցը նախատեսված է որպես ախտահանիչ մեծ և փոքր մակերեսների համար; կենսաբանական թափոնների ախտահանման համար; բորբոսասնկերի դեմ պայքարի համար; տարածքների հիմնական մաքրման համար; բժշկական նշանակության առարկաների ախտահանման համար; բժշկական նշանակության իրերի, կոշտ և ճկուն էնդոսկոպերի և դրանց գործիքների նախամանրէազերծումային մշակման համար; բժշկական նշանակության իրերի, կոշտ և ճկուն էնդոսկոպերի և դրանց գործիքների ախտահանման հետ զուգորդվող նախամանրէազերծումային մշակման համար:
Միջոցի պիտանիության ժամկետը արտադրողի փակ տարայում պահման պայմանների պահպանման դեպքում կազմում է 5 տարի: Աշխատանքային լուծույթի պիտանելիության ժամկետը փակ տարայում մութ պայմաններում պահման դեպքում կազմում է 28 օր:

**<<Բիո-Քիմ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած տեխնիկական բնութագրում նշված է-** շենքերում մակերեսների (հատակ, պատեր, այդ թվում՝ սալիկապատ) մաքրման և ախտահանման համար; ռետինե և պոլիպրոպիլենային գորգերի մաքրման և ախտահանման համար, կաշվից և արհեստական կաշվից պատրաստված կահույքի մաքրման և ախտահանման համար; սանիտարատեխնիկական սարքավորումների մաքրման և ախտահանման համար; բժշկական նշանակության առարկաների (ներառյալ՝ ստամոնաբուժական) սարքերի, սարքավորումների մաքրման և ախտահանման համար; սպասքի (ներառյալ՝ լաբորատոր) մաքրման և ախտահանման համար: Նյութի պահպանման ժամկետն արտադրողի փակ տարրողությունում, համապատասխան ջերմային պայմաններում՝ +5°C-ից մինչև +35°C-ը, 3 տարի է, աշխատանքային լուծույթներինը՝ 14 օր:

2.3 **Մասնակիցներին տրվեց մեկ օրացուցային օր Տեխնիկական բնութագրերը համապատասխանեցնելու ըստ մրցույթին տրված տեխնիկական բնութագրերի, մինչ սույն թվականի 22.01.2020 թիվ:**
**23.01.2020 թվականին ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/23 ծածկագրով մրցույթի նիստը կասեցվեց, Բիո Քիմ ՍՊԸ-ից պահանջելով ներկայացնել նմուշ: Նիստը կշարունակվի ապրանքի նմուշն օգտագործելուց հետո:**

2.4 **Մասնակիցների կողմից ներկայացվել են պահանջված շտկումները:**
2.5 **ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/23 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը Լեյկո ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումը գնահատեց բավարար, իսկ Բիո Քիմ ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումը և գնահատվեց անբավարար կից կցված հիմնավոր գրությամբ:**

***Կողմ՝ 5, Դեմ՝ 0***

3. Գնման առարկաների նախահաշվային գները և մասնակիցների առաջարկած գները.

| Հ/հ | գնման առարկայի անվանումը | մասնակիցներ | նախահաշվային գին | Ինքնարժեք /Շահույթ/ | ԱԱՀ | ընդհ. գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ամորաղեզ Գել | <<Միդա Թրեյդ>> ՍՊԸ | 940 000 | 1 900 000 | - | 1 900 000 |
| 2 | Ամորաղեզ Լայթ | Բիո Ֆիմ ՍՊԸ | 1 097 000 | 312 000 | - | 3 12 000 |
| | | <<Միդա Թրեյդ>> ՍՊԸ | | 1 560 000 | - | 1 560 000 |
| 3 | Բրիլիանտ Սպրեյ 750մլ Բրիլիանտ | <<Միդա Թրեյդ>> ՍՊԸ | 720 000 | 2 250 000 | - | 2 250 000 |
| 4 | Ախտահանիչ խտանյութ՝ նախատեսված էնդոսկոպների և բժշկական նշանակության առարկաների (ԲՆԱ) ախտահանման, նախամանրէազերծումային մշակման Յեքսանիոս Գ+Ռ խտանյութ | <<Լեյկո>> ՍՊԸ | 128 700 | 49 387 | - | 49 387 |
| | | <<Խաչպար>> ՍՊԸ | | 55 250 | - | 55 250 |
| | | <<Վագաերմիա>> ՍՊԸ | | 168 350 | - | 168 350 |
| 5 | Բարձր մակարդակի ախտահանող (ԲՄԱ ) և մանրէազերծող նյութ - Գլուտարալդեհիդ 20%: Խտանյութ Գլուտարալդեհիդ Ստերանիոս 20% | <<Խաչպար>> ՍՊԸ | 425 250 | 262 500 | - | 262 500 |
| | | <<Վագաերմիա>> ՍՊԸ | | 425 250 | - | 425 250 |
| 6 | Ախտահանիչ միջոց, խտանյութ՝ նախատեսված մակերեսների ախտահանման և մաքրման համար Սուրֆանիոս խտանյութ | <<Խաչպար>> ՍՊԸ | 514 500 | 193 750 | - | 193 750 |
| | | <<Վագաերմիա>> ՍՊԸ | | 514 500 | - | 514 500 |
| | | <<Լեյկո>> ՍՊԸ | | 599 950 | - | 599 950 |
| | | <<Միդա Թրեյդ>> ՍՊԸ | | 2 500 000 | | 2 500 000 |
| 7 | Անիոզիում ԴԴ-1 | <<Լեյկո>> ՍՊԸ | 247 500 | 247 500 | - | 247 500 |
| | | <<Վագաերմիա>> ՍՊԸ | | 303 000 | - | 303 000 |
| | | <<Միդա Թրեյդ>> ՍՊԸ | | 735 000 | - | 735 000 |

*Կողմ՝ 5, Դեմ՝ 0*

1. **Տվյալներ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հարցումներ չեն ստացվել:

4. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը հայտերի բացման նիստը կասեցնել և բավարար գնահատված մասնակիցներին հրավիրել գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա **12.02.2020թ ժամը 11:00-ին ք. Երևան, Ներսիսյան 7 հասցեում՝ ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Օ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի երրորդ հարկում գնումների բաժին:**

2. **12.02.2020թ ժամը 11:00-ին** տեղի ունեցավ գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցություններ, որի արդյունքում նիստին ներկա մասնակիցներ չեն եղել:

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

### ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/23 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան 13.02. 2020թ

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝**

Մելանյա Սահակյան՝ ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Օ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կլինիկական դեղագետ:

**Անդամներ՝**

*Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)*

Լաուրա Մուրադյան՝ ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Օ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի Լաբորատորիայի բաժնի ղեկավար,

Կարեն Մելիքսեթյան՝ ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Օ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի մեծահասակների բաժնի վարիչ.

*Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)*

Անի Գալստյան՝ ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Օ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի գնումների պատասխանատու.

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

1. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/23 ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը

**4-րդ, 7-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչեց **Լեյկո ՍՊԸ –ին,**
**5-րդ, 6-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչեց **Խաչպար ՍՊԸ-ին:**

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:**

2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենք 37-րդ հոդվածի «Գնումների մասին» ՀՀ օրենք 37-րդ հոդվածի 1-րդ մասը / Գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցը ներկայացրել է 2020 թվականի համար նախատեսված նախահաշվային գներից բարձր:/ **1-3-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:**

3. Հաստատել ընթացկարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

4. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել **5 օրացուցային օր:**

5. Հաստատել ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/23 ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:
6. Հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<**Լեյկո**>> **ՍՊԸ-ին,** <<**Խաչպար**>> **ՍՊԸ-ին:**

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0**

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | | **Մ. Սահակյան** |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | | Լ. Մուրադյան |
| | | Կ. Մելիքսեթյան |
| | | **Ա. Սիմոնյան** |
| | | **Շ. Եփրիկյան** |
| **Հանձնաժողովի քարտուղար՝** | | **Ա. Գալստյան** |

“ԲԻՈ – ՔԻՄ” ՍՊԸ

Մանանդյան 33, 1/1,
Երևան, 0046
Հայաստանի Հանրապետություն,
Հեռ. (+37410) 425679
Էլ. հասցե: info@biochem.am
www.biochem.am
www.bcdental.am

Հարգելի Պատվիրատու,

,,Բիո-Քիմ,, ընկերությունը մասնակցել է Ձեր կողմից հայտարարված ,,ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ 20/23,, ծածկագրով մրցույթին` 2-րդ չափաբաժնով, որն է Ախտահանիչ նյութ` ,,Աստրադեզ Լայթ,,կամ համարժեքը, և առաջարկել է մեր ընկերության կողմից արտադրված ,,BC Pre Clean UP,, ախտահանիչ միջոցը:

Հրավերում նշված է, որ միջոցը նախատեսված է որպես ախտահանիչ մեծ և փոքր մակերեսների համար; կենսաբանական թափոնների ախտահանման համար, բորբոսասնկերի դեմ պայքարի համար; տարաների հիմնական մաքրման համար; բժշկական նշանակության առարկաների ախտահանման համար; բժշկական նշանակության իրերի, կոշտ և ճկուն էնդոսկոպերի և դրանց գործիքների նախաստերիլիզացիոն մշակման համար; բժշկական նշանակության իրերի կոշտ և ճկուն էնդոսկոպերի և դրանց գործիքների ախտահանման հետ զուգորդված նախաստերիլիզացիոն մշակման համար:

Միջոցի պիտանիության ժամկետը արտադրողի փակ տարայում պահման պայմանների պահպանման դեպքում կազմում է 5 տարի: Աշխատանքային լուծույթի պիտանելիության ժամկետը փակ տարայում մութ պայմաններում պահման դեպքում կազմում է 28 օր:

Վերոնշյալ տեխնիկական բնութագրին համապատասխանում է, մեր իսկ կողմից առաջարկվող ապրանքը, միայն որոշ վերապահումով, այն է.

, մեր ապրանքատեսակի պիտանելիության ժամկետը 3 տարի է, քանի որ ընկերությունը հանդիսանում է տեղական արտադրող, ուստի պատրաստում է ապրանքը միայն նախատեսված պատվերի դեպքում, և քանի որ պատվիրատուները գնում են հիմնականում անմիջապես, հետևաբար 5 տարվա պիտանելիության ժամկետի առկայությունը դառնում է անիմաստ:

Մեր կողմից առաջարկվող նյութի աշխատանքային լուծույթի պահպանման ժամկետը 14 օր է: Բժշկական կենտրոնների մասնագետների հետ բազմաթիվ հարցումներից եզրակացրել ենք, որ գրեթե բոլորը նախընտրում են աշխատանքային լուծույթը պահպանել ոչ ավել քան 10 օր` անվտանգության նկատառումներից ելնելով: Ուստի գտնում ենք, որ մեր նյութի աշխատանքային լուծույթի պահպանման ժամկետը 14 օր` լիովին համապատասխանում է ներկայիս առողջապահական ոլորտի պահանջներին:

Խնդրում ենք, մեր կողմից նշված բացատրությունը հիմք հանդիսանա ճիշտ պատկերացնելու տեխնիկական բնութագրի անհամապատասխանությունը, և կայացնել արդարացի որոշում:

Հարգանքներով` ,,Բիո-Քիմ,, ընկերության
Տնօրեն` Աշոտ Ավետիսյան

**Հավելված 1.1**
**«ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով**
**գնանշման մրցույթի հրավերի**

**ՆԿԱՐԱԳԻՐ**
**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«ԼԵՅԿՈ» ՍՊԸ -ն **«ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/23»** ծածկագրով գնանշման հարցման մրցույթի շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագրերը |
| 4 | Դեզսանիոս Գ+Ռ խտանյութ համարժեք, լ | Աբակտերիլ | Աբակտերիլ | ***Ռուդեզ*** | 1. «Աբակտերիլ» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ ախտահանիչ միջոց) յուրահատուկ թույլ հոտով կանաչ կամ դեղին գույնի թափանցիկ հեղուկ է: Այն կարող է ունենալ նստվածք փոքր քանակությամբ. Որպես ազդող նյութ իր բաղադրության մեջ պարունակում է չորրորդային ամոնիումի միացությունների խառնուրդ ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդի և ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդի խառնուրդ. 1% պոլիհեքսամեթիլենգուանիդին և Ն,Ն-բիս (N,N-բիս) (3-ամինապրոպի) 9.75% դիդեցիլդի մեթիլամոնիումի քլորիդ հետ (գումարային 99 %). Ախտահանիչ միջոցի բաղադրության մեջ մտնում են լվացող և չարպալուծ բաղադրիչներ (ալկիլպոլիգլյուկոզիդ), բան ածնի ակտիվացուցիչներ, հոտավետիչ, թորած կամ ապամիներալացված ջուր, կոռոզիայի ինհիբիտորներ՝ մետաղից. ներառյալ ածխածնային խառնուրդներից, տիտանի և գունավոր մետաղների խառնուրդներից (արույր և պղինձ): +20⁰ C-ի պայմաններում 1 % ախտահանիչ միջոցի լուծույթի ջրածնային իոնների ակտիվության |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պահպանվում է առնվազն 3 ժամվա ընթացքում: Աշխատանքային լուծույթով շենքերում սրբելու եղանակով մակերեսների մշակման ժամանակ անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործումը անհրաժեշտություն չէ և կարելի է կատարել հիվանդի ներկայությամբ: Ինչպես նաև հատակի Ա մաքրման ժամանակ հետագա ջրով լվանալու պահանջ չկա (ինչը հաստատված է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով): Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար, հաշվարկները կատարվում են համաձայն ՀՀ Առողջապահության Նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Խտանյութի պիտանելիության ժամկետը՝ ոչ պակաս քան 2 տարի: Օգտագործվում է մակերեսների, գույքի, սպիտակեղենի, լաբորատոր սպասքի և այլ պարագաների ախտահանման և մաքրման համար: Վտանգավորության աստիճանը- 3-րդ, 4-րդ դաս: Ունի որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ: |
| 7 | Անիոզիում ԴԴ-1, լ | Անիոզիում ԴԴ-1 | Անիոզիում ԴԴ-1 | ***Անիոս*** | Օժտված է հակամանրէային ակտիվության գրամ դրական և գրամ բացասական մանրէների (ներառյալ տուբերկուլոզի միկոբակտրիաները), վիրուսների (ներառյալ հեպատիտների վիրուսները, ՄԻԱՎ-ը, պոլիոմիելիտը), Կանդիդա և դերմատոֆիտոն ցեղի նկատմամբ: Ունի լավ լվացող հատկություն, առարկաների մակերեսները չի փչացնում, օրգանական կեղտոտվածությունը չի ֆիքսում: Պահպանման ժամկետը 3 օր: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՊՐՈՖ. Ռ. Հ. ՅՈԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA
"HEMATOLOGY CENTER AFTER PROF. R. H. YEOLYAN" CJSCo

МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
"ГЕМАТОЛОГИЧЕСКИЙ ЦЕНТР ИМЕНИ ПРОФ. Р. О. ЕОЛЯНА" АОЗТ

375014 ՀՀ, Երևան, Հ. Ներսիսյան 7
7 Nersisyan str., Yerevan, Armenia
РА, Ереван, ул. Нерсисяна 7
☎ (374 10) 28 38 00, 28 38 93

[illegible] N

Պրոֆ. Յոլյանի անվ. ԱԿ տնօրեն Ս. Դանելյանին՝

Արտադրանքի վերահսկողության և մանրէաբանական

լաբորատորիայի վարիչ Դ. Սողոմոնյանից

Հայտնում ենք Ձեզ, որ ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/23 տենդերի մասնակից BIOCHEM BC Pre Clean UP Մաքրող և ախտահանող հեղուկ ախտահանիչ նյութը չի համապատասխանում ԱՆ հիվանդանոցային սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային կանոնակարգի պահանջներին, քանի որ փորձարկման արդյունքում հայտնաբերվել են ԱՑԽՄ ընտանիքի մանրէներ:

Փորձարկումն իրականացվել է համաձայն Հակամանրէային զգայունության ստուգման եվրոպական կոմիտեի (EUCAST methodology) կանոնակարգի:

http://www.eucast.org/ast_of_bacteria/guidance_documents/

Տնօրեն Ս.Հ.Դանելյան

Արտադրանքի վերահսկողության և
մանրէաբանական լաբորատորիայի վարիչ Դ. Սողոմոնյան